Կարգապահական գործ թիվ ԿԳ-26152

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՊՐԵՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ և զեկուցող անդամ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյան,

մասնակցությամբ՝ փաստաբան Հայկ Ապրեսյանի,

քննության առնելով փաստաբան Հայկ Անդրանիկի Ապրեսյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2398) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը **(այսուհետ՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ)** հայտնել է, որ փաստաբան Հայկ Ապրեսյանը «e-request.am» էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է մի շարք դիմումներ, որոնց շրջանակներում կատարել է սարկաստիկ և վիրավորական որոշակի արտահայտություններ:

Թիվ ԿԳ-26152-2-Ա
17.06.2026թ.

Ըստ Դիմողի՝ Երևանի քաղաքապետարանին հասցեագրված 19.11.2025 թվականի գրությամբ Փաստաբանը կատարել է հետևյալ արտահայտությունը. «***եթե օրինակ նույն իրավաբանական վարչության տվյալ դիրքորոշումը գրած անձի տատը կամ պապը, հայրը կամ մայրը Խորհրդային Հայաստանի որևէ հիմնարկում աշխատած լինելով սեփականության իրավունքով որպես վաստակ՝ բարելավում, Երևան քաղաքում հողամաս ստացած լիներ*** *և դրա սահմանների ճշտում իրականացներ ներկայիս իրավիճակում, առնվազն հողամասի* ***տեղադիրքի նույնականացման համար չէր դիմի բախտագուշակի, աստղագետի****, էլի պտի դիմեր այն իրավասու մարմին, որտեղ պահվում են հատկացման արխիվային քարտեզներ և այն վարչական շրջան, որտեղ քաղաքացիներին պատկանող հողամասերը 90 տոկոս՝ մեծամասնությամբ հատկացվել են նույն գործադիր կոմիտեի կողմից,* ***ինչը զարմանալիորեն անգամ գործից ու իրավիճակից անտեղյակ Շերլոկ Հոմսի համար զարմանալի չպիտի թվար***»:

Դիմողը նշել է, որ Երևանի քաղաքապետարանին հասցեագրված 16.01.2026 թվականի գրության մեջ նշվել է, որ «***Երևանի քաղաքապետարանում էլ մի խումբ «մտքի գիգանտներ» հողամասի սահմանների ճշտում կատարելու համար քաղաքացուն ստիպում են*** *իր հողամասի չափագրությունը կատարելիս առաջնորդվի կադաստրի սխալ քարտեզով: Իհարկե երկիր, քաղաք,* ***վարչական մարմին կառավարելն ամեն մարդու խելքի բանը չէ, բայց եթե հիպոթետիկ մի օր կառավարողը լինի բանիմաց,*** *խիզախ ու լայնախոհ, մինչ օրս քաղաքացիներին նշված մեթոդով պատճառված գույքային վնասների համար լինելու են պատասխանատուներ:*»:

Ըստ Դիմողի՝ Վարչապետի աշխատակազմին հասցեագրված 17.01.2026 թվականի գրության մեջ Փաստաբանը կատարել է հետևյալ արտահայտությունը. ***«Պ-ն Վարչապետ խնդրում եմ գրավոր պատասխանել՝ արդյոք Ձեր իմացությամբ և թույլտվությամբ է պետական և տեղական ինքնակառավարման համակարգում պաշտոնյաների ու կոմպետենտությունը խրախուսվում: ... ու մեկ էլ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Արմինե Ստեփանյանը: Վարչական իրավունքը ու Երևանի քաղաքապետարանի վարչարարությունը այս անձի ղեկավարմամբ մի նոր բարձունքի է հասել...»:***

Դիմողը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանին հասցեագրված 17.01.2026 թվականի մեկ այլ գրության մեջ նշվել է, որ ***«...Կարծում եմ, որ վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս. Ստեփանյանի դիրքորոշումը անլուրջ է, ...»***, իսկ մեկ այլ գրությամբ նշել է ***«Հարգելի տիկին Ստեփանյան խնդրում եմ հետայսու ավելի ուշադիր լինել»***:

Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և [illegible] Հայկ Ապրեսյանին ենթարկել պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականության [illegible] և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների [illegible]

նպատակով՝ 06.04.2026թ. Դիմողին առաջարկվել է համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն այդպիսիք չեն ներկայացվել:

2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Հայկ Ապրեսյանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 16.03.2026թ. ներկայացրած բացատրությամբ մանրամասն ներկայացրել է իր վստահորդի և Երևանի քաղաքապետարանի միջև առկա խնդրի մասին և նշել, որ բազմիցս ընդունելության դիմումներ է ներկայացրել, սակայն Դիմողը չի ցանկացել ընդունել Փաստաբանին: Փաստաբանը բազմիցս խնդրել է Դիմողին կայացնել վարչական ակտ կայացնելը մերժելու վերաբերյալ որոշում, ինչը չի կատարվել:

Փաստաբանը նշել է, որ առաջացած խնդրի մասին տեղեկացրել է ՀՀ վարչապետի աշխատակազմին և ՀՀ արդարադատության նախարարին՝ խնդրելով պարզաբանում: Նշված մարմիններից ստացվել են պատասխաններ:

Փաստաբանը հայտնել է, որ ՀՀ գլխավոր դատախազին հաղորդում է ներկայացրել իրավաբանական վարչության պետի պաշտոնակատարի և աշխատակազմի քարտուղարի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքի կատարման մասին:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 06.04.2026թ. Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն այդպիսիք չեն ներկայացվել:

3. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 09.03.2026թ. թիվ 259-Ա/ԿԳ-26152 որոշմամբ փաստաբան Հայկ Ապրեսյանի նկատմամբ 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

10.03.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Ծովինար Քուրքչյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 08.05.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 08.05.2026թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 17.06.2026թ. ժամը 18:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Հայկ Ապրեսյանն իր վստահորդի իրավունքների պաշտպանության նպատակով «e-request.am» էլեկտրոնային համակարգի միջոցով Երևանի քաղաքապետարան ներկայացրել է մի շարք դիմումներ: *Սույն փաստը հաստատվում է Երևանի քաղաքապետարանին հասցեագրված 19.11.2025թ., 16.01.2026թ., 17.01.2026թթ. գրություններով, ինչպես նաև Վարչապետի աշխատակազմին հասցեագրված 17.01.2026թ. գրությամբ:*

2. Երևանի քաղաքապետարանին հասցեագրված 19.11.2025 թվականի գրությամբ կատարել է հետևյալ արտահայտությունը. «***եթե օրինակ նույն իրավաբանական վարչության տվյալ դիրքորոշումը գրած անձի տատը կամ պապը, հայրը կամ մայրը Խորհրդային Հայաստանի որևէ հիմնարկում աշխատած լինելով սեփականության իրավունքով որպես վաստակ՝ բարելավում, Երևան քաղաքում հողամաս ստացած լիներ*** *և դրա սահմանների ճշտում իրականացներ, ներկայիս իրավիճակում, առնվազն հողամասի* ***տեղադիրքի նույնականացման համար չէր դիմի բախտագուշակի, աստղագետի,*** *էլի պտի դիմեր այն իրավասու մարմին, որտեղ պահվում են հատկացման արխիվային քարտեզներ և այն վարչական շրջան, որտեղ*

քաղաքացիներին պատկանող հողամասերը 90 տոկոս՝ մեծամասնությամբ հատկացվել են նույն գործադիր կոմիտեի կողմից, ***ինչը զարմանալիորեն անգամ գործից ու իրավիճակից անտեղյակ Շերլոկ Հոմսի համար զարմանալի չպիտի թվար»:***

Երևանի քաղաքապետարանին հասցեագրված 16.01.2026 թվականի գրության մեջ Փաստաբան Հայկ Ապրեսյանը նշել է, որ «***Երևանի քաղաքապետարանում էլ մի խումբ «մտքի գիգանտներ» հողամասի սահմանների ճշտում կատարելու համար քաղաքացուն ստիպում են*** *իր հողամասի չափագրությունը կատարելիս առաջնորդվի կադաստրի սխալ քարտեզով: Իհարկե երկիր, քաղաք,* ***վարչական մարմին կառավարելն ամեն մարդու խելքի բանը չէ, բայց եթե հիպոթետիկ մի օր կառավարողը լինի բանիմաց,*** *խիզախ ու լայնախոհ, մինչ օրս քաղաքացիներին նշված մեթոդով պատճառված գույքային վնասների համար լինելու են պատասխանատուներ:»*:

Հաջորդիվ, Վարչապետի աշխատակազմին հասցեագրված 17.01.2026 թվականի գրության մեջ Փաստաբանը կատարել է հետևյալ արտահայտությունը. ***«Պ-ն Վարչապետ խնդրում եմ գրավոր պատասխանել՝ արդյոք Ձեր իմացությամբ և թույլտվությամբ է պետական և տեղական ինքնակառավարման համակարգում պաշտոնյաների ու կոմպետենտությունը խրախուսվում: (...) ու մեկ էլ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Արմինե Ստեփանյանը: Վարչական իրավունքը ու Երևանի քաղաքապետարանի վարչարարությունը այս անձի ղեկավարմամբ մի նոր բարձունքի է հասել...»:***

Երևանի քաղաքապետարանին հասցեագրված 17.01.2026 թվականի մեկ այլ գրության մեջ նշվել է, որ ***«...Կարծում եմ, որ վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս. Ստեփանյանի դիրքորոշումը անլուրջ է, ...»***, իսկ մեկ այլ գրությամբ նշել է ***«Հարգելի տիկին Ստեփանյան խնդրում եմ հետայսու ավելի ուշադիր լինել»***: *Սույն փաստերը հաստատվում են Երևանի քաղաքապետարանին հասցեագրված 19.11.2025թ., 16.01.2026թ., 17.01.2026թթ. գրություններով, ինչպես նաև Վարչապետի աշխատակազմին հասցեագրված 17.01.2026թ. գրությամբ:*

6. **<u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Հայկ Ապրեսյանը փաստաբան է հանդիսանում 22.05.2018 թվականից և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. **<u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Հայկ Ապրեսյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ

կետի և Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

- արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի պահանջները.

- արդյո՞ք փաստաբանն իր գործունեությամբ խուսափել է գործել այլ բնագավառներում այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

7.1.1 Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:

Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել որպես օրենքով նախատեսված սահմանափակում՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված սահմանափակման**» համատեքստում, թե՝ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ***դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի[1] 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով[2]***:

---

[1] Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:

[2] Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 (no. 66232/10, § 27)

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա ..... խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները*:

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար, ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:**

Նույն կերպ պետք է ընկալել Պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և **փաստաբանի վարքագծի կանոնագրքի** պահանջները խախտելու համար.....:*

7.1.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել **միայն օրենքով**՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ **այլոց պատվի ու բարի համբավի** և այլ հիմնական իրավունքների և ազատությունների **պաշտպանության նպատակով**:*

Այդպիսի կարգավորում ունի նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ *այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, **որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում**՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մեկնաբանելով հայտնվելու արտահայտվելու ազատության պաշտպանության շրջանակների հարցը, նշել է, որ անձի արժանապատվության նկատմամբ ոտնձգությունը կարող է սպառնալիք

ազատության իրավունքի պաշտպանության շրջանակից դուրս լինել, եթե դա անիմաստ վիրավորանք է, օրինակ՝ երբ վիրավորական հայտարարության միակ նպատակը անձին վիրավորելն է:[3]

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո արդյոք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՝ ոչ:

ա) Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 27.01.2015թ. որոշմամբ[4] բերված իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումներն ամբողջությամբ տեղավորվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «***որոնք նախատեսված են օրենքով***» հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս պատասխանատվության է ենթարկել փաստաբանական պալատն արտահայտվելու համար՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման հիմքով: Հունգարիայի փաստաբանության օրենսդրությունը էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

բ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք Պալատը, փաստաբանի արտահայտվելու ազատությունը Կանոնագրքով սահմանափակելով, իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՝ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը, այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ *4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից ..... փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման ..... նկատմամբ. 5) միջոցներ ձեռնարկել **փաստաբանության** հեղինակության բարձրացման ուղղությամբ*: Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ *Փաստաբանությունը **փաստաբանների մասնագիտական միավորում է**, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ Պալատի խնդիրներից է բարձր պահել ՀՀ բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը, և հետևաբար, Պալատի մարմին հանդիսացող Պալատի Հանձնաժողովի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը՝ դրանով իսկ բացասաբար ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

գ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ

---

[3] CASE OF MAGYAR TARTALOMSZOLGÁLTATÓK EGYESÜLETE AND INDEX.HU ZRT-ն դեմ՝ Հունգարիայի թիվ 22947/13, 02/02/2016, § 76:

[4] Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր այն հավասարակշռությունը մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Այս հարցին անդրադառնալու համար նախ և առաջ անհրաժեշտ է խոսել հասարակությունում փաստաբանության դերի և նշանակության մասին:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ*[5]:

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև* ***Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի***[6] ***կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները****:*

Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝* ***նպաստել*** *Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին,* ***եվրոպական իրավական ստանդարտների և ավանդույթների արմատավորմանը****:*

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց,*

[5] Տե՛ս Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.02.1994թ. վճիռը (§ 54):

դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը[7]*:*

ՀՀ Սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. "Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները* ***<u>սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը</u>****»:*

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

7.1.3 արդյո՞ք փաստաբանն իր գործունեությամբ խուսափել է մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառներում պոռնիկի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

[7] Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Սույն ենթակետով փաստաբանի վրա դրվում է նեգատիվ պարտականություն խուսափելու այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ նպաստում է արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Այս համատեքստում փաստաբանի վրա են դրվում բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե այլ ոլորտներում:

Տվյալ պարագայում Հանձնաժողովը նախ անհրաժեշտ է համարում ընդգծել, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործունեության վերաբերյալ փաստաբանի քննադատական դիրքորոշումը, այդ թվում՝ կոշտ և սուր ձևակերպումներով արտահայտված քննադատությունը, ինքնին չի կարող կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսանալ: Փաստաբանը, իրականացնելով վստահորդի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, իրավունք ունի վիճարկել վարչական մարմնի գործողությունները կամ անգործությունը, մատնանշել թույլ տրված խախտումները, կասկածի տակ դնել վարչական մարմնի դիրքորոշման իրավական հիմնավորվածությունը և պահանջել պատշաճ վարչարարություն:

Միաժամանակ, կարծիքի արտահայտման ազատությունը չի ազատում փաստաբանին իր հատուկ կարգավիճակից բխող մասնագիտական պարտականությունների պահպանումից: Փաստաբանի կողմից ընտրված քննադատության ձևը պետք է համատեղելի լինի մասնագիտական կոռեկտության, զսպվածության և հարգալից հաղորդակցության նվազագույն պահանջների հետ: Հետևաբար, սույն կարգապահական գործով գնահատման առարկան ոչ թե այն է, թե Փաստաբանը իրավասու էր արդյոք քննադատել Երևանի քաղաքապետարանի գործողությունները կամ դիրքորոշումը, այլ այն, թե իր քննադատությունն արտահայտելիս վերջինս պահպանել է արդյոք փաստաբանի վարքագծին ներկայացվող պահանջները:

Հանձնաժողովը կարևորում է, որ վիճարկվող արտահայտությունները կատարվել են Փաստաբանի կողմից իր վստահորդի շահերի պաշտպանության շրջանակներում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հասցեագրված պաշտոնական գրություններում: Հետևաբար տվյալ դեպքում Փաստաբանը գործել է ակնհայտորեն փաստաբանի կարգավիճակով, իսկ նրա վարքագիծն անմիջականորեն կապված է եղել մասնագիտական գործունեության իրականացման հետ: Նշված հանգամանքը ոչ թե նվազեցնում, այլ առավել էական է դարձնում մասնագիտական հաղորդակցության կանոնների պահպանման անհրաժեշտությունը:

Սույն գործով Փաստաբանի գրությունները չեն սահմանափակվել համապատասխան վարչական մարմնի գործողությունների, անգործության կամ իրավական դիրքորոշման իրավական քննադատությամբ: Դրանցում օգտագործվել են, մասնավորապես, հետևյալ ձևակերպումները՝ «չէր դիմի բախտագուշակի, աստղագետի», «անգամ գործից ու իրավիճակից անտեղյակ Շերլոկ Հոմսի համար զարմանալի չպիտի թվար», «մի խումբ «մտքի գիգանտներ»», «վարչական մարմին կառավարելն ամեն մարդու խելքի բանը չէ», «եթե հիպոթետիկ մի օր կառավարողը լինի բանիմաց, խիզախ ու լայնախոհ», «արդյոք Ձեր իմացությամբ և թույլտվությամբ է պետական և տեղական ինքնակառավարման համակարգում պաշտոնյաների կոմպետենտությունը խրախուսվում», ինչպես նաև՝ «Վարչական իրավունքը ու Երևանի քաղաքապետարանի վարչարարությունը այս անձի ղեկավարմամբ մի նոր բարձունքի է հասել»:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ նշված արտահայտություններն իրենց բովանդակությամբ և գործածության համատեքստով ուղղված չեն միայն վարչական մարմնի կոնկրետ դիրքորոշման իրավական թերությունների ներկայացմանը: Դրանց մի մասով ծաղրական եղանակով արժեզրկվում են համապատասխան աշխատակիցների մասնագիտական կարողությունները, իսկ քննադատության առարկան վարչական գործողությունից կամ իրավական դիրքորոշումից տեղափոխվում է դրանք կազմած կամ ընդունած անձանց մտավոր և մասնագիտական հատկանիշների գնահատման դաշտ:

Այսպես, **«բախտագուշակի, աստղագետի»** դիմելու և **«Շերլոկ Հոմսի»** վերաբերյալ ձևակերպումները կարող էին օգտագործվել քաղաքապետարանի պահանջի կամ վարչարարության անհիմն լինելն ընդգծելու համար, սակայն ընտրված համեմատություններն <u>իրենց ծաղրական բնույթով</u> չեն ավելացնում իրավական փաստարկի բովանդակությունը: Նույն կերպ **«մտքի գիգանտներ»** արտահայտությունը տվյալ համատեքստում չի օգտագործվել դրական կամ չեզոք իմաստով, այլ ակնհայտ <u>հեգնական բնույթ ունի</u> և ուղղված է համապատասխան աշխատակիցների մտավոր կարողությունների արժեզրկմանը:

«Վարչական մարմին կառավարելն ամեն մարդու խելքի բանը չէ» և **«եթե հիպոթետիկ մի օր կառավարողը լինի բանիմաց»** ձևակերպումներով քննադատության առարկա է դարձվում ոչ միայն կոնկրետ վարչարարությունը, այլ նաև վարչական մարմնի ղեկավարումն իրականացնող անձանց բանիմացությունը: Նմանապես, պաշտոնյաների **«անկոմպետենտությունը խրախուսվելու»** և վարչական իրավունքը **«մի նոր բարձունքի»** հասցնելու վերաբերյալ ձևակերպումները, իրենց հնչմատեքստում գնահատվելով, ունեն ոչ թե զուտ իրավական քննադատության, այլ <u>անձնավորված և ծաղրական գնահատականի բնույթ:</u>

Հանձնաժողովը միաժամանակ գտնում է, որ Փաստաբանի կողմից օգտագործված բոլոր ձևակերպումները չեն կարող նույն իրավական գնահատականն ստանալ: Մասնավորապես՝ «վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս. Ստեփանյանի դիրքորոշումը անլուրջ է» և «Հարգելի տիկին Ստեփանյան, խնդրում եմ հետայսու ավելի ուշադիր լինել» արտահայտությունները, առանձին վերցված, չեն անցնում թույլատրելի մասնագիտական քննադատության սահմանները և ինքնուրույն բավարար չեն Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտում արձանագրելու համար: Առաջինը վերաբերում է ներկայացված դիրքորոշման գնահատմանը, իսկ երկրորդը, չնայած կարող է ընկալվել որպես խրատական տոնով ձևակերպված, ինքնին չի պարունակում վիրավորական կամ արժեզրկող բառապաշար:

Այդուհանդերձ, վերոնշյալ հանգամանքը չի բացառում կարգապահական խախտման առկայությունը, քանի որ պատասխանատվության հիմքում դրվում են ոչ թե վերջին երկու արտահայտությունները, այլ Փաստաբանի կողմից պաշտոնական գրագրության ընթացքում անձնականացված ձևակերպումները, որոնցով համապատասխան անձանց մասնագիտական կարողությունները ներկայացվել են արժեզրկող եղանակով:

Հանձնաժողովը նաև հաշվի է առնում, որ վիճարկվող արտահայտությունները չեն օգտագործվել մեկ անգամ՝ հուզական անմիջական արձագանքի պայմաններում, այլ տեղ են գտել տարբեր օրերին կազմված մի քանի պաշտոնական գրություններում: Արտահայտությունների կրկնվող բնույթը վկայում է, որ խոսքը պատահական լեզվական վրիպակի կամ մեկանգամյա անհաջող ձևակերպման մասին չէ, այլ Փաստաբանի կողմից գիտակցաբար ընտրված հաղորդակցման եղանակի:

Միաժամանակ Փաստաբանի կողմից ներկայացված նախապատմությունը, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի հետ երկարատև անհամաձայնությունները, ընդունելության կազմակերպման հետ կապված խնդիրները, վարչական ակտ չկայացնելու կամ պատշաճ պատասխան չտրամադրելու վերաբերյալ պնդումները, կարող են բացատրել նրա դժգոհության պատճառները, սակայն չեն արդարացնում մասնագիտական հաղորդակցության սահմաններից դուրս եկող բառապաշարի ընտրությունը: Նույնիսկ վարչական մարմնի ոչ պատշաճ կամ ապօրինի վարքագծի վերաբերյալ համոզմունքը փաստաբանին չի ազատում փաստաբանին մասնագիտական կոռեկտության պահանջները պահպանելու պարտականությունից:

Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտումը տվյալ դեպքում դրսևորվել է նրանով, որ Փաստաբանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ պաշտոնական հաղորդակցությունում հանդես գալով որպես իր վստահորդի ներկայացուցիչ, իրավական դիրքորոշման ներկայացումը զուգակցել է համապատասխան աշխատակիցների մտավոր և մասնագիտական կարողությունները ծաղրող ու արժեզրկող արտահայտություններով: Նման վարքագիծը կարող է հասցեատերերի մոտ ձևավորել այն ընկալումը, որ փաստաբանը վստահորդի իրավունքների պաշտպանության համար իրեն վերապահված մասնագիտական հնարավորություններն օգտագործում է ոչ միայն իրավական փաստարկներ ներկայացնելու, այլև պաշտոնատար անձանց անձնական ու մասնագիտական հատկանիշները նսեմացնող գնահատականներ տալու նպատակով: Այդպիսի

հաղորդակցությունը չի համապատասխանում փաստաբանից ակնկալվող զսպված, կոռեկտ և իրավական փաստարկման վրա հիմնված վարքագծին: Այն հասցեատերերի մոտ կարող է ձևավորել այն ընկալումը, որ փաստաբանական գործունեության շրջանակում թույլատրելի է պաշտոնատար անձանց մասնագիտական կարողությունների ծաղրական արժեզրկումը, ինչն իր հերթին կարող է կասկածի տակ դնել ինչպես տվյալ փաստաբանի, այնպես էլ փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը: Ընդ որում, խախտումը պայմանավորված չէ նրանով, որ Փաստաբանը քննադատել է վարչական մարմնի աշխատանքը կամ կասկածի տակ է դրել դրա աշխատակիցների մասնագիտական կարողությունները: Կարգապահական գնահատման հիմքն այն է, որ այդ քննադատությունը ներկայացվել է պաշտոնական մասնագիտական գրագրության մեջ՝ իրավական խնդրի լուծման համար անհրաժեշտություն չունեցող, բազմակի և ակնհայտ ծաղրական ձևակերպումներով:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետը չի պահանջում, որ փաստաբանության հեղինակությանը փաստացի վնաս արդեն պատճառված լինի: Բավարար է, որ տվյալ վարքագիծն իր բնույթով կարողանա կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը: Տվյալ դեպքում Փաստաբանի մասնագիտական կարգավիճակով կազմված պաշտոնական գրություններում անձնականացված և ծաղրական բառապաշարի կրկնվող օգտագործումն իր բնույթով կարող էր կասկածի տակ դնել փաստաբանի և փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը:

Հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի արտահայտվելու ազատության նկատմամբ միջամտությունը պայմանավորված է ոչ թե Երևանի քաղաքապետարանի գործունեության վերաբերյալ նրա քննադատական դիրքորոշմամբ կամ բարձրացված իրավական խնդրի բովանդակությամբ, այլ այդ դիրքորոշման արտահայտման համար ընտրված՝ իրավական փաստարկման տեսանկյունից ոչ անհրաժեշտ բառապաշարով:

Եվրոպական դատարանը Kincses v. Hungary գործով էական է համարել քննադատության բովանդակության և դրա արտահայտման եղանակի տարբերակումը: Այդ գործով փաստաբանը պատասխանատվության էր ենթարկվել ոչ թե դատավորի գործողությունները կամ մասնագիտական վարքագիծը վիճարկելու համար, այլ քննադատության այն տոնի ու ձևակերպումների համար, որոնցով արժեզրկվել էին դատավորի մասնագիտական կարողությունները: Եվրոպական դատարանը նաև հաշվի էր առել, որ նույն քննադատությունը հնարավոր էր արտահայտել առանց խնդրահարույց բառապաշարի օգտագործման:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբան Հայկ Ապրեսյանի կողմից «բախտագուշակի, աստղագետի», «Շերլոկ Հոմսի», «մտքի գիգանտներ», «վարչական մարմին կառավարելն ամեն մարդու խելքի բանը չէ», «եթե հիպոթետիկ մի օր կառավարողը լինի բանիմաց», պաշտոնյաների «անկոմպետենտությունը խրախուսվելու» և վարչական իրավունքը «մի նոր բարձունքի» հասցնելու վերաբերյալ ձևակերպումների օգտագործմամբ խախտվել է Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջը, հետևաբար նաև Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Հանձնաժողովը հաշվի է առնում, որ Փաստաբանի կողմից թույլ տրված խախտումը դրսևորվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հասցեագրված պաշտոնական գրություններում մասնագիտական հաղորդակցության սահմաններից դուրս եկող, ծաղրական և անձնական գնահատական պարունակող արտահայտությունների օգտագործմամբ, ինչը չի համապատասխանում փաստաբանի մասնագիտական վարքագծին ներկայացվող պահանջներին:

Միաժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում, որ Փաստաբանի գործողությունները կատարվել են մասնագիտական գործունեության իրականացման շրջանակներում՝ վարչական մարմնի դիրքորոշման վերաբերյալ անհամաձայնություն արտահայտելու նպատակով, և գործով առկա չեն տվյալներ այն մասին, որ նշված վարքագծի արդյունքում առաջացել են ծանր կամ անդառնալի հետևանքներ:

Միաժամանակ, Հանձնաժողովը որպես Փաստաբանին բնութագրող հանգամանք հաշվի է առնում այն, որ վերջինս 2021-2026 թվականների ընթացքում կարգապահական տույժ չի ունեցել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ սույն կարգապահական գործով արձանագրված խախտման բնույթը և հետևանքները, Փաստաբանի մեղքի աստիճանը, ինչպես նաև կարգապահական տույժերի բացակայության հանգամանքը գնահատելով՝

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ առավել խիստ կարգապահական տույժի կիրառումն անհրաժեշտ և համաչափ չէ:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ Փաստաբանի նկատմամբ «նկատողություն» կարգապահական տույժի կիրառումը բավարար է կատարված խախտմանը պատշաճ արձագանքելու, մասնագիտական հաղորդակցության չափանիշների պահպանման անհրաժեշտությունը շեշտելու և հետագայում նույնաբնույթ վարքագիծը կանխելու համար:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հայկ Անդրանիկի Ապրեսյանի (արտոնագիր՝ թիվ 2398) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-26152-2-Ա
17 հունիսի 2026թ.
ք.Երևան